**Արձանագրություն N 2**
**ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-24/6-Ա ծածկագրով ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 23 հոկտեմբերի 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղալյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Ալեյանը, Կ. Սարգսյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

## Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի Տավուշի ջրամբարի պատվարի վերականգնման աշխատանքների ձեռքբերման ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-24/6-Ա ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2024 թվականի հոկտեմբերի 18-ին, ժամը 16:00-ին (հրապարակվել է 15.10.2024թ.): Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-24/6-Ա ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

| Մասնակցի անվանումը | հասցե, հեռախոսահամար | էլեկտրոնային հասցե |
|---|---|---|
| «ՇԻՆԱՐՎԵՍՏ» ՍՊԸ | ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ փ. 40ա տուն 033 820707 | shinarvest@gmail.com |
| «ՇՄՇ-23» ԲԲԸ | ք. Վեդի, Վ. Համբարձումյան 9 060 651304, 093 431304 | shmsh-23@rambler.ru shmsh23@gmail.com |

## Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

| | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| | **Չափաբաժին 1** **Գնման գին – 280 533 020 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Այլ շենքերի, շինությունների հիմնանորոգում - ՀՀ Տավուշի մարզի Տավուշի ջրամբարի պատվարի վերականգնման աշխատանքներ | | | |
| 1 | «ՇԻՆԱՐՎԵՍՏ» ՍՊԸ | 228 000 000 | 45 600 000 | 273 600 000 |
| 2 | «ՇՄՇ-23» ԲԲԸ | 317 083 333 | 63 416 667 | 380 500 000 |

**Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին**

---

ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-24/6-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ՇԻՆԱՐՎԵՍՏ» ՍՊԸ-ն և «ՇՄՇ-23» ԲԲԸ-ն հայտով ներկայացրել են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«ՇԻՆԱՐՎԵՍՏ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված Հավելված 1.1-ը (հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին հավաստում) չի համապատասխանում ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-24/6-Ա ծածկագրով հրավերի պահանջներին՝ սխալ է նշված մրցույթի ձևը և բացակայում է Սարքավորումների սերտիֆիկացված և ՀՀ տարածքում կիրառելի լինելու վերաբերյալ հավաստումը:

ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-24/6-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակից «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի գնային առաջարկը գերազանցում է գնման գինը:

**Հանձնաժողովի որոշումը**

---

ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-24/6-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Մասնակից «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի հայտը մերժել՝ հրավերի պահանջներին անհամապատասխանության հիմքով (գնային առաջարկը գերազանցում է գնման գինը):
2. Համաձայն Հրավերի 8.9 կետի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակից «ՇԻՆԱՐՎԵՍՏ» ՍՊԸ–ին մինչև կասեցման ժամկետի ավարտը (24.10.2024թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | _____ | Է. Բաղալյան |
| անդամներ | _____ | Կ. Ալեյան |
| | _____ | Կ. Սարգսյան |
| Քարտուղար | _____ | Ս. Գալստյան |